ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի մայիսի 16-ի N 563-Ն հրամանով հաստատված << Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2011-2012 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլաններ>>-ի <<Ընդհանրական պարզաբանումներ>> բաժնի 11-րդ կետի պահանջը

***կարգադրում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2011-2012 ուսումնական տարվա 3-12-րդ դասարանների աշակերտների ձմեռային արձակուրդները երկարացնել մինչև 01ի 22-ը ներառյալ՝ գարնանային արձակուրդների և լրացուցիչ պարապմունքների հաշվին:
2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ